լռությամբ հարգանքի տուրք մատուցվեց Ցեղասպանության զոհերի հիշատակին, ապա գլխավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Հարություն սրկ. Համբարձումյանի կատարվեց Հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ 1915 թ. Մեծ եղեռնի անմեղ նահատակների: Արարողության ավարտին բոլոր ներկաները գլուխ խոնարհեցին և ծաղիկներ դրեցին հուշաքարին:

Արարողությանը ներկա էին հնդկահայոց եկեղեցական խորհրդի անդամներ, ճեմարանի դասախոսական կազմը, համայնքի ներկայացուցիչներ, հյուրեր և սաներ:

ՇԱԽՄԱՏԻ ԳՐՈՅՍՄԱՍՏԵՐ ՍՄԲԱՏ ԼՊՈՒՏՅԱՆԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ապրիլի 3-ին Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանում հյուրընկալվեց Հայաստանի Հանրապետության շախմատի ակադեմիայի հիմնադիր նախագահ, Օլիմպիական կոմիտեի և Ակադեմիայի հոգաբարձուների խորհրդի անդամ, գրոյսմաստեր Սմբատ Լպուտյանը: Նա օրերս պաշտոնական այցով գտնվում էր Հնդկաստանում՝ մասնակցելու Կալկաթա քաղաքի շախմատային բաց առաջնությանը: Օգտվելով պատեհ առիթից՝ Ս. Լպուտյանն այցելեց նաև Հայոց Մարդասիրական ճեմարան, ուր հանդիպեց ճեմարանի սաներին և ուսուցչական կազմին: Ճեմարանականները մեծ ոգևորությամբ ընդունեցին նշանավոր հայ շախմատիստին: Հնդկահայոց հոգևոր հովիվ և ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլզյուլյանը, ջերմորեն ողջունելով պատվավոր հյուրին, նշեց, որ ճեմարանականները սրտի տրոփյունով էին սպասում այս հանդիպմանը: Այնուհետև Ս. Լպուտյանը ողջունեց ճեմարանի սաներին և խոսեց Հայաստանում շախմատի զարգացման հեռանկարների մասին: Ճեմարանականների խնդրանքով նա նաև անդրադարձավ մարզական իր հարուստ կենսագրությանը և սիրով պատասխանեց նրանց հուզող բազմաթիվ հարցերի: Ի պատիվ հյուրի՝ ճեմարանականները հանդես եկան նաև գեղարվեստական հայտագրով: Վերջում Ս. Լպուտյանը շրջեց ճեմարանում, ծանոթացավ ճեմարանի պայմաններին և առօրյային և մտերմիկ զրույց ունեցավ սաների հետ:

ԴԻՎԱՆ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ